ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ»՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐԻՑ

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Հայերը՝ սահմանադրական ազգ

Սահմանադրությունը, որպես հասարակության և պետության փոխհամաձայնությունը վավերացնող հիմնարար փաստաթուղթ, առավել գործուն միջոցն է հանրային կյանքում օրինավորություն ապահովելու։ Եվ պերճախոս է այն հանգամանքը, որ այդ անվանումը մեր նախնիները գործածել են ավելի քան 1500 տարի առաջ՝ «Սահմանադրութիւն կանոնի Վաչագանայ Աղուանից արքայի»[1]։ Հակոբ և Շահամիր Շահամիրյանների «Որոգայթ փառաց» սահմանադրական նախագիծը (1773 թ.) այսօր էլ արժեքավոր և ընդօրինակելի է սկզբունքների էության և հոդվածների ընդգրկման առումով։ Իսկ ներածական մասում ամփոփված փիլիսոփայությունը մարդկանց համակեցության միակ արժանավոր եղանակի՝ օրինականության փառաբանումն է. «Ձեզ համար ընտրեք բարի օրենքներ՝ ապրելով ու կախման մեջ մնալով ձեր օրենքներից, քանզի ոչ ոք իրավունք չպիտի ունենա իշխելու ձեզ, բացի ձեր օրենքներից»[2]։

Հայոց սահմանադրական մշակույթին ծանոթանալիս դյուրին է համոզվել, որ պատմության այս կամ այն փուլում, լինի ինքնուրույն պետականության օրոք, թե պետականազուրկ պայմաններում (ինչպես նույն «Որոգայթ փառացի» կամ խնդրո առարկա՝ 1860 թ. ընդունված «Հայոց ազգային սահմանադրության» պարագայում), բուն երևույթը՝ սահմանադրականությունը, որպես մտածելակերպ, արգասիքն է հայոց սոցիալ-փիլիսոփայական, իրավաքաղաքական մտքի ընդոծին զարգացման։ Հայկական մշակույթը հարուստ է եկեղեցական և աշխարհիկ կյանքի կարգավորմանն ուղղված կանոնագրքերով և դատաստանագրքերով։ Հայ առաքելական եկեղեցին պարբերաբար քննարկել է ոչ միայն դավանաբանական, ծիսական և ներկազմակերպական կանոնակարգման, այլև ազգային-պետական կյանքի օրինավոր կարգավորման, հասարակության տարբեր խավերի (այդ թվում՝ եկեղեցականների և աշխարհականների) միջև հակասությունների մեղմման խնդիրները։ Դրանց են ուղղված եղել Աշտիշատի (356 թ.) և Շահապիվանի (444 թ.) կանոնադիր ժողովները, Դվինի ժողովները (վեցը՝ 506 թ. մինչև 720-ը), Պարտավի եկեղեցական ժողովը (768 թ.), Սսի ժողովները (ութը՝ 1204 թ. մինչև 1361-ը), Զագավանի ժողովը (1270 թ.) և այլն։ Հայ կանոնական իրավունքի համապարփակ փաստաթուղթ է Հովհաննես Իմաստասեր Օձնեցու

[1] Տե՛ս Կանոնագիրք հայոց / Աշխատասիրությամբ Վազգեն Ա. Հակոբյանի/: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. Ա, 1964, էջ 91-100:
[2] Որոգայթ փառաց, Եր., «Հայաստան», 2002, էջ 14:

«Կանոնագիրք Հայոցը»[3], որն ամփոփել և վավերացրել է (Դվինի V ժողովում) IV-ից VII դարերի կանոնական գրությունները, հարստացել հետագա լրացումներով: Նույն օրինավորության նպատակադրմամբ է բնութագրվում Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»[4]: Եթե կանոնագիրքն առավելապես հորդորական, խրատական բնույթի է (թեպետ պարունակում է նաև որոշակի պատիժներ օրինավորությունը խախտելու համար), ապա դատաստանագիրքը կառուցված է ըստ հանրային կյանքում օրինավոր վարքագծի խստիվ կարգավորման պահանջի, արարքի և պատժի հիմնավորված հարաբերակցության: Դրանցից են Դավիթ Ալավկա որդու (1130 թ.), Մխիթար Գոշի (1184 թ.), Ներսես Լամբրոնացու (1191–1196 թթ.), Սմբատ Սպարապետի (1265 թ.) դատաստանագրքերը[5]: Ուշագրավ են Գոշի հիմնավորումները (նա նշում է դատաստանագիրք գրելու 12 պատճառ), մասնավորապես՝ գրառված օրենքների կարիք նախկինում այնքան էլ չկար, քանի որ կրոնը, հավատը մարդկանց սրտումն էր, բայց հավատը թուլացել է, ուստի անհրաժեշտություն է առաջացել օրինավորության գրառված կարգավորման[6]: Ազգային-հանրային կյանքի կարգավորման հարցերը հայ մտավորականները քննարկել են նաև օտար պետությունների կազմում որպես համայնք գործառելիս. կանոնների ձևով դրանք կոչված են եղել կառավարելու ներհամայնքային կյանքը, կարգավորել են ինչպես համայնքի անդամների փոխհարաբերությունները, այնպես էլ կապերը համապետական հաստատությունների հետ. այդպիսիք են, օրինակ՝ «Աստրախանի հայոց դատաստանագիրքը» և մեր քննարկման առարկան՝ թուրքահայության «Ազգային սահմանադրությունը»[7]:

Միով բանիվ, հայ մեծ իրավաբան, ազգային-քաղաքական գործիչ Գրիգոր Զոհրապը լիովին հիմք ուներ թե՛ մշակութաբանական, թե՛ բարոյահոգեբանական առումով պնդելու, որ **սահմանադրականությունը հայոց ազգին ներհատուկ վարվելակերպ** է. «Մենք որ Սահմանադրական սկզբունքներով վարուող ազգ մըն ենք....»[8]: Իսկ արդեն բուն Ազգային սահմանադրության առումով, դրա խորագիտակ հետազոտողներից մեկը՝ Ատոմը (Ռ. Լուսերիկյան), 1914 թվականին, այսինքն՝ փաստաթղթի կեսդարյա գործառության վերլուծության լույսով, ամփոփում է. «Թէ՛ օրէնքի ծագումի ու զարգացման պատմական տեսութիւններով, թէ՛ հիմնական սկզբունքներովը եւ թէ՛ ընդհանուր գծերովը ապացուցեցինք եւ ընդունեցինք որ մեր ազգային վարչական կազմակերպութիւնը իր կրած ձեւաշրջումով ներքին մշակոյթի ինքնավարութիւն է, իսկ այդ ինքնավարութիւնն ալ սահմանադրական է»[9]:

Ինքնին հասկանալի է, որ սահմանադրությունը՝ որպես պետության հիմնական օրենք, ենթադրում է պետության առկայություն, որից հայությունը զուրկ էր: Սահմանադրությունը, որպես պետական իշխանության և հասարակության միջև յուրատեսակ դաշնագիր, ամենից առաջ սահմանում-բնութագրում է տվյալ երկրի իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական հիմունքները, պետության տարածքային կազմակերպումը, պետահիրավական ռեժիմը. նման բան սույն փաստաթղթում, իհարկե, չէր կարող լինել: Սակայն փորձենք տարբերել իրավական փաստաթուղթը դրա բովանդակությունից, ոգուց՝ սահմանադրականությունից:

---

[3] Տե՛ս Կանոնագիրք հայոց, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. Ա, 1964, հ. Բ, 1971: Տե՛ս նաև **Հ. Օձնեցի**, Հայաստանում տեղի ունեցած ժողովների մասին // Հ. Օձնեցի, Երկեր / Գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրումները՝ Վազգեն Համբարձումյանի, Եր., «Անահիտ», 1999, էջ 203–208:

[4] Տե՛ս **Ն. Շնորհալի**, Թուղթ ընդհանրական, Եր., «Իրավունք», 2009:

[5] Տե՛ս **Դավիթ Ալավկա Որդի**, Կանոնագիրք, Եր., Իրավունք, 2010, **Մ. Գոշ,** Գիրք դատաստանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, **Ներսես Լամբրոնացի**, Քաղաքային օրենք / փոխադրությունը Մաքսիմ Ոսկանյանի, Եր., «Իրավունք», 2009, **Սմբատ Սպարապետ**, Դատաստանագիրք / փոխադրությունը՝ Մաքսիմ Ոսկանյանի, Եր., «Իրավունք», 2008:

[6] Տե՛ս **Մ. Գոշ**, նշվ. աշխ., էջ 2–3:

[7] Տե՛ս Դատաստանագիրք Աստրախանի հայոց, Եր., 1967, «Ազգային Սահմանադրություն հայոց», Կ. Պոլիս: Յազգային տպ. Ս. Փրկիչ, 1860:

[8] **Գր. Զոհրապ**, Երկերի ժողովածու չորս հատորով, յաւելեալ հատ. Ե, Եր., Գրականութեան եւ արվեստի թանգարանի հրատ., 2004, էջ 186: Գրիգոր Զոհրապի հայացքների ավելի հանգամանալից վերլուծությունը տե՛ս **Վ. Միրզոյան**, Գրիգոր Զոհրապը՝ հանրային կառավարման խնդիրների մասին //«Բանբեր ԵՊՏԻ», 2005, № 3, էջ 54–71:

[9] **Ատոմ**, Ազգային Սահմանադրութիւնը: Գիծեր մեր մշակոյթի պատմութենէն, Կ. Պոլիս, 1914, էջ 70:

Այս դիրքերից ահա պիտի ընդունենք, որ անգամ անհամապատասխան անվանմամբ, թերակատար գործադրմամբ, այս փաստաթուղթը ինքնին վկայությունն է հայ մշակույթի, մտածելակերպի, հատկապես իրավական-կառավարաբանական մտքի գերազանցության՝ պետականորեն իշխող ազգային տարրի հանդեպ։

Սահմանադրության ընդունման պայմանները

Դիտարկենք «Հայոց ազգային սահմանադրության» ընդունման պատմական, սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական **նախադրյալները։** Սկսենք նրանից, որ 1860 թ. Թուրքիան դեռ չուներ սեփական սահմանադրություն. առաջին սահմանադրությունն ընդունվել է 1876 թ., չեղյալ հայտարարվել 1878-ին և վերականգնվել 1908-ին։

Սուլթանական Թուրքիան XIX դարի կեսին տնտեսական, քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական ծանր ճգնաժամի մեջ էր։ Պետության ռազմաֆեոդալական բնույթը, կառավարչական վիթխարի ապարատն ու համատարած շահածախվածությունը, տնտեսության հետամնացությունը, տեղական արտադրանքի ցածր մրցունակությունը, գյուղացիության ծանրագույն հարկային բեռը, ազգամիջյան բախումները, քաղաքացիների անձնական և գույքային անապահով վիճակը, ռուս-թուրքական պատերազմներում կրած ծանր պարտությունները, եվրոպական երկրներից ֆինանսական կախվածությունը. սա՛ էր այն իրողությունը, որի պայմաններում հայ համայնքի մտավորական վերնախավը հասավ Սահմանադրության կայացմանը և ձգտում էր գործադրել դրա բարենպաստ ներուժը։

Տնտեսության անմխիթար վիճակի մասին է խոսում թեկուզ այն փաստը, որ 1876 թ. պետության արտաքին պարտքը հասել էր ավելի քան 6 մլրդ ֆրանկի, և բյուջեի ծախսային մասի կեսից ավելին ուղղվում էր արտաքին

վիթխարի պարտքի և տարատեսակ վարկերի տոկոսների մարմանը[10]։

Քաղաքական դժնդակ պայմանների հետ կապված՝ հիշատակենք թեկուզ Սուլթան Համիդ II-ի անունը։ «Նոր օսմանների» կազմակերպության (հանդես էր գալիս սահմանադրական միապետություն ստեղծելու ծրագրով) իրականացրած հեղաշրջմամբ գալով իշխանության՝ սա, թեպետ հարկադրված եղավ հռչակելու Թուրքիայի առաջին սահմանադրությունը 1876 թ. դեկտեմբերի 23-ին, սակայն, դառնալով երկրի պատմության մեջ, փաստորեն, առաջին սահմանադրական միապետը, ծաղր էր բուն սահմանադրականության համար. փետրվարին անորոշ ժամանակով ցրում է խորհրդարանը, Սահմանադրությունը դարձնում ձևական փաստաթուղթ, երկրում հաստատում հրեշավոր բռնապետություն («զուլում»), կառավարման վատթարագույն համակարգ[11]։

Առերևույթ, հայերը, թուրքահպատակ մյուս ազգերի համեմատությամբ (քրդեր, արաբներ, հույներ, ալբանացիներ, բուլղարացիներ, հրեաներ, քրդեր, չերքեզներ), թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես ավելի բարձր դիրքում էին։ Պատճառը ճիշտ նույնն է, ինչ այն շրջանում, երբ Հռոմը գրավեց Հունաստանը և դարձրեց իր նահանգը. նվաճողները հայտնվեցին մշակութային կախման մեջ նվաճված, բայց առավել զարգացած ազգից։ Թուրք սելջուկները ևս, Մոնղոլիայի խորքերից գալով, հասնելով Հայկական բարձրավանդակ, տիրելով շինարար հայ ժողովրդին, ամեն կերպ օգտվեցին հայերի (մասամբ նաև հույների) իմացական մտքից և

[10] Տե՛ս **Петросян Ю. А.**, Османская империя: могущество и гибель. Исторические очерки. М., „Наука”, 1990, էջ 199:
[11] Տե՛ս մանրամասն **Մ. Ա. Հասրաթյան, Ս. Ն. Օրեշկովա, Յու. Ա. Պետրոսյան**, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Եր., Երևանի համալս. հրատ., 1986, էջ 176–203:

արհեստի հմտություններից։ Որպեսզի առարկայական լինենք (այլ ոչ՝ վասն սնափառության), անդրադառնանք անառարկելի մի հեղինակի՝ հայ մեծ լեզվաբան **Հրաչյա Աճառյանի՝** 1943 թ. Երևանի պետական համալսարանի գիտական նստաշրջանում «Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ» թեմայով զեկուցման մեջ արտահայտած կարծիքին։ Շնորհիվ իրենց տաղանդի, կրթվածության, թուրքերենի կատարյալ իմացության՝ հայերը պաշտոն են զբաղեցրել կառավարչական ամենաբարձր ատյաններում, վիթխարի վաստակ ունեն գիտության, մշակույթի, առևտրի, արհեստների, փաստաբանության, բժշկության, ճարտարապետության, մանկավարժության մեջ։ Հայերն են հիմնել թուրքական թատրոնը, հրատարակչական գործը, պարբերական մամուլը, ոսկերչությունը, շերամաբուծությունը և այլն։ «Որովհետև տաճկական փառասիրությունը չէր թողնում նախարարությունները ամբողջովին հայոց հանձնել,– վկայում է Հր. Աճառյանը,– ուստի տաճկական կառավարությունը մտածեց ամեն նախարարի մոտ մի հայ դնել իբր խորհրդատու կամ օգնական, բայց իրոք վարիչ»[12]։ Այդկերպ հայ պաշտոնյաներն էին փաստացի տնօրինում արտաքին գործոց նախարարությունը, դրամահատումը (փողերանոցը), ռազմամթերքի արտադրությունը (վառոդապետությունը), հեռագրական, թղթատարական և հանրային շինությանց վարչությունները, հանքաց և անտառաց վերատեսչությունը և այլն։

Այդքանով հանդերձ՝ հայերի կայքն ու կյանքն ապահովված չէին, հայերը մնում էին անբարեհուսո տարր՝ «գյավուր», հայերին չէին զինվորագրում, զինվորական վարժարան մուտքն արգելված էր, օսմանյան օրենքներում բազմաթիվ խտրականություններ կային[13], ստորացուցիչ այլ պայմաններ։

Հայոց ձգտումը՝ օրինականության հաստատման և կանոնադրական փաստաթղթի ձևով դրա վավերացման, ուներ ոչ միայն արտաքին, այլև ներքին պատճառներ։ Հայ համայնքի արտոնյալ խավը՝ «ամիրաները» (այս պատվանունը շնորհվում էր առավել ազդեցիկ և հարուստ հայազգիներին. XIX դարի կեսին ամիրայական գերդաստանների թիվը հասնում էր 100-ի[14]), մեծավ մասամբ թուրք տերերի կողմն էին, տնտեսական կարողությամբ և պետական վերնախավի հետ հզոր կապերով եղանակ էին ստեղծում ազգային-հանրային կյանքում, իրենց կամքը թելադրում նաև եկեղեցու ղեկավարությանը։ Ահա թե ինչ է վկայում մինչսահմանադրական իրողության մասին **Հրանտ Ասատուրը՝** ժամանակաշրջանի նշանավոր մտավորականներից մեկը, 1879 թ. ելույթ ունենալով Սահմանադրության ընդունման հերթական տարեդարձի օրը. «Ազգային իշխանութիւնի տեսակետով, հայ ժողովուրդի իրաւունքն առաթուր կը կոխուէր, զի միապետական դրութիւնն յաղթանակ տարած էր յայնժամ. մի պատրիարք ունէր ազգն եւ ամիրայներ իբր տէր եւ իշխան, իբր պաշտպան եւ փաստաբան իւր դատի։ Ամիրայներն ինքնակոչ կը գային իշխանական մականն առնուլ, ոչ զի արժան էին նմա, այլ զի պատիւ ունէին եւ դրամ։ Նոքա կը գործէին ինչ որ ուզէին, պատասխանատուութիւնն առ ոչինչ կը նկատուէր, զրօ էր ժողովուրդի կամքն։ Իսկ պատրիարքն կամ առաջնորդներն ամիրայի գործիքն էին շատ անգամ»[15]։

---

[12] **Հր. Աճառյան**, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Եր., «Զանգակ-97», 1999, էջ 13։

[13] Խտրականությունը հատկապես ցայտուն է եղել հարկահավաքման ասպարեզում. «անհավատներից» հարկագանձումը ավանդաբար ավելին է, քան մահմեդականներից։ Ահավասիկ, ըստ սահմանված կանոններից մեկի, «պիտի վերցնել մուսուլմանների բամբակից, բանջարեղենից, այգիներից և պտուղներից յոթից մեկը, իսկ անհավատներից՝ հինգից մեկը» (Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, էջ 48)։

[14] Տե՛ս ՀՍՀ, հ. 1, Եր., 1974, էջ 320։

[15] **Հ. Ասատուր**, Սահմանադրութիւն եւ հայ ժողովուրդ, Կ. Պոլիս։ Արամեան տպ., 1879, էջ 19։

Հավելենք Մատթեոս Մամուրյանի վկայությունը հայ մեծահարուստների (չնչին բացառությամբ) հանրային բացասական դերակատարման մասին. «....ազգային իշխանություն մ'որ տիրող ցեղին ձգտումներ ունի, բռնանալ, և ոչ միայն ժողովրդյան մտավոր ու բարոյական պիտույքը չհոգար՝ իր վայելած անգին արտոնությամբն, այլև օտարին հարստահարության ձեռնտու և ինքնին հարստահարիչ կգտնվի, հարուստներ՝ որ լոկ ճոխ ապարաններ, խնջույքներ, պերճանք կսիրեն և փաշաներու առջև կսողան, սողալով խաբելու և դրամ կորզելու համար, ուսումնականներ, որ անտարբեր են ազգին կամ օտարացած» (**Մ. Մամուրյան**, Անգլիական նամականի // Մ. Մամուրյան, Երկեր, Եր., «Հայաստան», 1966, էջ 192)։

Եվ, վերջապես, 1860 թ. մայիսի 24-ին հայ առաջադեմ մտավորականների ջանքերը պսակվեցին հաջողությամբ. երկարատև քննարկումներից հետո ընդունվեց «Ազգային սահմանադրությունը»։ Սա, փաստորեն, շուրջ քսան տարվա մտավոր և կազմակերպական աշխատանքի երախայրիքն է. հեղինակներն են Նահապետ Ռուսինյանը, Ներսես Վարժապետյանը, Գրիգոր Օտյանը, Հովհաննես Տատեյանը, Գրիգոր և Մկրտիչ Աղաթոն եղբայրները, Կարապետ Ութուճյանը, Նիկողայոս Պալյանը, Սերովբե Վիչենյանը և այլք։

Արդեն նույն տարվա օգոստոսի 25-ին սահմանադրությունը գործադրվել է. գումարվել է Ազգային ընդհանուր ժողով՝ ընտրված երեսփոխաններով, կազմավորվել (կամ վերակազմավորվել) են Ազգային վարչությունը և մյուս գործադիր մարմինները, հաստատվել է գործունեության կարգը, կանոնավոր նիստեր են կայացել։ Երեք տարի ձգձգելուց հետո (մասամբ նաև շահարկելով ներհայկական որոշ տարաձայնություններ) Օսմանյան Թուրքիայի Կառավարությունը 1863 թ. մարտի 17-ին փաստաթուղթը վավերացրեց որպես «Հայոց ազգի կանոնադրություն» («Նիզամնամէի միլլէթի էրմէնեան»)։ Սահմանադրությունը բաղկացած է ներածական մասից («Հիմնական սկզբունքներ») և հինգ գլխից, ընդհանուր առմամբ՝ 99 հոդվածից (նախնական 150-ից թուրքերը դուրս թողեցին շատ էական հոդվածներ)[16], գործել է մինչև 1896 թ. (կասեցրել է Աբդուլ Համիդ II սուլթանը), ապա՝ 1908–1915 թվականներին։

Սահմանադրության արգասիքը

Այսօր ինչպե՞ս կարելի է գնահատել փաստաթուղթը։

Անտարակույս, տևական ջանքերով ձեռք բերված սահմանադրություն-կանոնադրությունը չէր ապահովելու «Ազատություն, եղբայրություն, հավասարություն»։ Թուրքիան հեռու էր հանրային օրինավորության պահպանումից, մանավանդ այլադավան հայերի համար։ Այնպես որ, գերլավատեսորեն տրամադրված մոլորյալներն ակամա վնասում էին հայոց ազգային ինքնագիտակցության զարթոնքին ու ինքնակազմակերպման ամրապնդմանը։ Որքան էլ խոսվեր միասնական «օսմանականության» մասին, որքան էլ որոշ հայեր հավատային «բարեխնամ» Կառավարության մարդասիրությանը, մի բան աներկբա է, որ Թուրքիայի ղեկավարությունը որդեգրել էր մի քաղաքականություն, որ տարիներ հետո ցեղասպանության հիմնական պատճառն էր դառնալու. թուրքերը, որպես եկվոր տարր, վաղ թե ուշ փորձելու էին ազատվել իրենց զավթած տարածքի բնիկ տերերից, և հայերի հետ «սիրախաղը» լոկ շղարշ էր՝ հանդես գալու եվրոպական հանրույթի առջև։

Այս առումով ուշագրավ է 1870 թ. օգոստոսի 21-ի Ազգային ժողովի՝ «երեսփոխանական վերակազմութեամբ» անդրանիկ նիստը նախագահող **Խրիմյան Հայրիկի** բացման խոսքը։ Շնորհավորելով նորընտիր երեսփոխաններին՝ նա միանգամայն իրատեսական հարցադրումներ է անում. «Երեսփոխանութեան միակ յորդոր մ՚ունիմ. չափազանցութենէ հեռի կենանք, կշռենք, դատենք, այնչափ՝ որչափ որ կարող եմք, եւ մեր գործնական սահմանէն անդին չանցնինք. գաւառական հայերը, Մշոյ դաշտին հարստահարեալ ժողովուրդը փրկաւէտ տնօրէնութիւններ մեզմէ ակնդէտ կ՚սպասեն. եթէ լուսաւոր կերպով խորհածնիս խոհական կերպով գործադրենք, Ազգն ու Տէրութիւնը գոհ կըլլան»[17]։

---

[16] Տե՛ս «Ազգային Սահմանադրություն հայոց», Կ. Պոլիս: Տպ. S. Տօղրամաճեան, 1914:

[17] «Ատենագրութիւն երեսփոխանական ընդհանուր ժողովոյ», նիստ Առաջին: Կ. Պոլիս, 1870, էջ 3: Խրիմյան Հայրիկը խոր մտքեր ունի պետություն–ժողովուրդ փոխհարաբերության կարգավորման, իշխանության գործադրման, ներընտանեկան կյանքի կառավարման, պարտականություն–իրավունք կապի ներդաշնակության ապահովման

Միևնույն ժամանակ, չի կարելի ժխտել, որ սահմանադրության շնորհիվ հայ համայնքը նոր հնարավորություն էր ստանում օրինական ճանապարհով ընդլայնելու սեփական իրավունքներն ու ազատությունները: Խնդիրը, այսպիսով, երկակի է եղել. առաջին՝ սթափ գնահատել հանրային կառավարման այս լծակը, երկրորդ՝ դրան տալ առավելագույնս բարենպաստ գործադրում:

Առանձնացնենք ամենակարևորը: Հանրային կառավարման դիրքերից՝ կատարվեց որակական նորամուծություն, հայության կարգավիճակի արմատական փոփոխություն. օտար պետական կառույցի շրջանակներում հայերը սկսեցին գործել ոչ թե սոսկ որպես եկեղեցական-կրոնական համայնք, այլ օրենսդրական սկզբունքներով գործառող ազգային-հավաքական միավոր: «Հիմնական սկզբունքների» հատվածում այդկերպ էլ բնորոշվում են ազգի և նրա անդամների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Այնպես որ՝ Հրանտ Ասատուրը հիմք ուներ շատ պատկերավոր բնութագրելու այդ փաստը. «Հայ երակին մէջ թմրեալ արիւնն սկսեցաւ եռալ վերջապէս: Ա՛լ գրեթէ չմնաց կրօնական մոլեռանդութիւն. մի տեսակ ազգային մոլեռանդութիւն յաջորդեց նմա»[18]:

Սահմանադրությունը ճշտորոշեց հայության ինքնակառավարման համակարգը, դրա կառուցվածքը, կենտրոնական և տեղական կառույցների փոխհարաբերությունները, կառավարման մարմինների ընտրության և հաշվետվության կարգը: Ձևավորվեցին (մասամբ՝ վերակազմավորվեցին և վերանվանվեցին) օրենսդիր (Ազգային ընդհանուր ժողով) և գործադիր (Ազգային կենտրոնական վարչություն) մարմինները: Ազգային կրոնական և քաղաքական ժողովների իրավասություններն էին ազգի, համապատասխանաբար՝ հոգևոր և աշխարհիկ գործերը: Գործում էին մասնագիտացված խորհուրդներ՝ տնտեսական, դատաստանական, ուսումնական, վանքերի, նաև «մատակարարութեան պաշտօնով հոգաբարձութիւն»՝ ելևմտից, կտակաց, հիվանդանոցի: Տեղերում ինքնակառավարումը իրականացնում էին գավառական վարչությունները և թաղական խորհուրդները: Հստակեցված էին բոլոր մարմինների իրավասություններն ու պարտականությունները, կազմը, ընտրության կարգը, ենթակայությունը, բյուջեի («սնտուկի») ձևավորումն ու ծախսի հսկողությունը, եկեղեցական և աշխարհական երեսփոխանների ընտրության եղանակը և այլն[19]:

հիմնարար հարցերի շուրջ. տե՛ս **Վ. Միրզոյան**, Հանրային կառավարման խնդիրները՝ ըստ Խրիմյան Հայրիկի // «Բանբեր ՀՊՏՀ», 2008, № 2, էջ 73–89:

[18] **Հ. Ասատուր**, նշվ. աշխ., էջ 19:

[19] Տե՛ս հանգամանորեն **Ա. Սարուխան**, Հայկական խնդիրն եւ ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում, Ա հատոր, Թիֆլիս: «Էպօխա», 1912, **Գ. Գրիգորյան**, Ազգային Սահմանադրություն Հայոց, Եր., «Եգեա», 2004:



Հանրային ինքնակառավարման համակարգը՝

ըստ Ազգային սահմանադրության

Առավել էական է, որ ամբողջ համակարգը գործառում էր միապետական Թուրքիային միանգամայն խորթ ժողովրդական սկզբունքներով: Թեպետ Պոլսո պատրիարքը պահպանել էր որոշ արտոնություն, բայց նախկին վիճակի համեմատ դա գրեթե ամբողջապես ներկայացուցչական դերակատարության բնույթ ուներ[20], այնպես որ, փաստացի՝ **հայությունը ընտրել էր խորհրդարանային կառավարման ձևը,** ինքնակառավարման բոլոր մարմինները ընտրովի էին և գործում էին օրինավորության սահմաններում:

Այս հանգամանքը ըստ արժանվույն գնահատելու համար մեջբերենք Ազգային ժողովի 1870 թ. օգոստոսի 28-ի նիստի արձանագրությունը: Քննարկման էր դրված երկրորդ վերաքննության (վերախմբագրման) սահմանադրության տեքստը. ներկայացնելով վերաքննիչ հանձնախմբի «տեղեկագրութիւնը» (հաշվետվությունը), **Նահապետ Ռուսինյանը՝**

[20] «Պատրիարքի պաշտոնն այդ համակարգում ատավիզմ է, հնից ժառանգած մնացուկ, որը պահպանվել է զուտ օսմանյան կայսրության պահանջով, որը ձգտում էր ինչ որ բան փոխելով՝ ոչինչ չփոխել» (**Գ. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 138-139): Հավելենք, որ «պատրիարքություն» հաստատությունն ինքնին խորթ է հայոց եկեղեցու նվիրապետությանը, արհեստածին մարմին է. Բյուզանդական կայսրության ուղղափառ եկեղեցու համաբանությամբ հիմնել է սուլթան Մուհամեդ II Ֆաթիհը 1461 թ.՝ Էջմիածնի կաթողիկոսությունից թուրքահայությանը կտրելու նպատակով: Տե՛ս ՀՍՀ, հ. 9, Եր., 1983, էջ 177:

1860-ի տարբերակի հիմնական հեղինակներից մեկը (որի առաջարկն էր հենց «Սահմանադրություն» անվանելը), շեշտում է՝ խումբը կողմնորոշվել է սահմանադրության ոգով, մի ոգի, որ «հաւասարութիւն կը հաստատէ ամեն ազգայնոց մէջ, եւ օրինաւորութիւն կը պատուիրէ ազգային ամեն տնօրինութեանց մէջ»[21]: Եվ ինքն էլ հարկ է համարում ճշգրտել. «Ի՞նչ է օրինաւորութիւնը, եթէ ոչ՝ հաւասարապէս առնված ու ազատապէս բացայայտված կարծիքը բազմութեան, այսինքն մեծագոյն մասին»[22]:

Այս հանգամանքը փոքր-ինչ տարօրինակ պիտի թվա: Իսկապես, ահա թե ինչ է եզրակացնում հայոց հոգեբանության խորագիտակ հետազոտողներից մեկը՝ **Հակոբ Պողոսյանը**. «Ամբողջ հայ պետական կեանքի ընթացքին մենք, Հայերս, ունեցած չենք ռամկավարական որեւէ դրութիւն, բացի աւատական և միապետական դրութիւններէն: Բայց հայ կեանքը ուշի ուշով դիտողներ կը տեսնեն թէ հայ պետական միտքը Արշակունեաց բացարձակ միապետական միտքը դրութենէն հետզհետէ հրաժարվելով ի յայտ կը բերէ ռամկավարական հոգեբանութիւն մը, ուր ժողովուրդին կամքը առաւել կամ նուազ տեղ կը գրաւէ թագաւորներու ընտրութեան և վարչական ձեւին ու օրէնսդրութեան մէջ: Ռամկավարական այս ոգին աւելի աչքառու կերպով ծաւալեցավ ու աճեցաւ Հայոց մէջ մանաւանդ Օսմանեան տիրապետութեան տակ»[23]: Այս նկարագրությունը, անշուշտ, կարոտ է հայ հոգեբանների, ազգագրագետների, մշակութաբանների, քաղաքագետների համակողմանի վերլուծության: Հավելենք, որ «Ազգային սահմանադրությունից» 90 տարի առաջ գրված՝ Շահամիրյանների «Որոգայթ փառաց» սահմանադրական նախագիծը, որ նույնպես խորհրդարանական հանրապետության տիպարն էր հիմնավորում, դարձյալ առանձնանում էր աշխարհում այդ ժամանակ (1773 թ.) առավելապես միապետական կառավարման տերությունների խորապատկերին: Իհարկե, ճիշտ նույն տարի հրատարակված մեկ այլ ուշագրավ փաստաթղթում Շահամիրյանների մերձավոր համախոհ, մադրասահայության երևելի մտավորականներից մեկը՝ **Մովսես Բաղրամյանը,** հակված էր սահմանադրական միապետությանը, սակայն կառավարման ձևում ընկած օրինականության հրամայականը երկու դեպքում էլ նույնն է. «Իշխանությունը ինչ-որ միմիայն մեկի դատողությանն ու կառավարմանը չպետք է ենթակա լինի, այլ ամենալավագույնը կլիներ, եթե իշխանությունը անխախտելի սահմանադրությամբ և անեղծանելի օրենքներով կախում ունենար ընտիր-ընտիր ու մեծամեծ խորհրդականներից և տեսակ-տեսակ խորհրդարաններից»[24]:

Մեզ համար արժեքավոր է հայոց ինքնակառավարման մարմնի՝ Ազգային ժողովի գործառության սկզբունքների ըմբռնումը, որը վերստին ցուցադրում է հայկական մտածելակերպին բնորոշ առավելությունները: Համոզվենք Ազգային ժողովի 1863 թ. նոյեմբերի 7-ի նիստի ընթացքում **Գրիգոր Օտյանի** ելույթից մի մեջբերմամբ. «Կառավարութեան գլուխ եղողներուն կը վերաբերի չափազանցութիւնները ամոքել, կիրքերը հանդարտեցնել և ճշմարտութեան ծառայել, չվախնալ կողմնակցութիւններէն, այլ յարգել ինչ որ իրաւացի է իրենց պահանջմանցը մէջ, և մերժել միայն ինչ որ նախապաշարմունք և կիրք է»[25]:

Սահմանադրության գործառության խոչընդոտները

[21] «Ատենագրութիւն երեսփոխանական ընդհանուր ժողովոյ», նիստ Երկրորդ: Կ. Պոլիս, 1870, էջ 17:
[22] Անդ:
[23] **Յ. Պ. Պողոսեան**, Ներածութիւն հայ հոգեբանութեան, Դահիրէ: Տպարան Սահակ-Մեսրոպ, էջ 1958, 522–523:
[24] Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, Եր., Երևանի համալս. հրատ., 1991, էջ 132:
[25] **Գր. Օտեան**, Սահմանադրական խօսքեր ու ճառեր, Կ. Պոլիս: Տպ. ԳԱՏԵՐ, 1910, էջ 2:

Սոսկ օրենքների հռչակմամբ օրինավորություն չի ապահովվում։ Եթե պետությունը չի կատարում հանրային կյանքի օրինավորության երաշխավորի պարտականությունը, ապա դրանով ինքն է անբարոյականացնում հասարակությունը, քաղաքացիներին դրդում ապօրինի գործողությունների։ Դա է մատնացույց անում **Գր. Զոհրապն** արդեն բուն Թուրքիայի սահմանադրության մասին. «Պնդել՝ թէ Սահմանադրութիւնը Թուրքիոյ մէջ կ'երաշխաւորէ իսլամներուն եւ քրիստոնեաներուն հաւասարութիւնը՝ քիչ մը յանդուգն կրնայ թուիլ այն պահուն, ուր այդ վարչակարգը կատարեալ սնանկութեան մէջ է»[26]։

Ինչ վերաբերում է Ազգային սահմանադրության, առհասարակ, Թուրքիայում առկա, թեկուզ սուղ, իրավական հնարավորությունները օգտագործելուն, ապա **Մատթեոս Մամուրյանը** դառնությամբ ամփոփել է. «Հայ ժողովուրդը Սահմանադրություն մը հաստատելու արիությունն ունեցավ, սակայն զայն պաշտպանելու արիությանը մեջ չհարատևեց»[27]։

«Ինչո՞ւ» հարցի պատասխանը այսօր էլ արդիական է։ Բայց դա պահանջում է համակողմանի քննարկում։ Համենայնդեպս, դժվար է լիովին համաձայնել այն կարծիքին (մանավանդ հույժ աճապարանոք՝ արդեն 1863 թ. հրապարակված), թե իբր հայ ժողովուրդը «պատրաստ չէր կամ գոնէ պատրաստուած չէր տակաւին Սահմանադրութիւն մը ընդունելու»[28]։ Սրա հեղինակը՝ պատմաբան, թարգմանիչ, խմբագիր, պետական գործիչ (օսմանյան նավատորմի նախարարությունում որպես թարգմանիչ աշխատելիս արժանացել էր փաշայության աստիճանի) **Հովսեփ Վարդանյանը** (1815–1879), ամրապնդում է իր եզրակացությունը. «Որովհետև յայտնի եղաւ, որ Հայ ազգին ընդհանրութիւնը տակաւին սահմանադրական տրամադրութիւններ չունէր, և այս դրութիւնը մանավանդ թէ ժամանակի հարկ մըն էր, և փոքրագոյն մասին հրաւէրը, ասկէց բնականաբար կը հետևի որ ընդհանուր ընդունելութիւն մըն ալ չ'պիտի գտնար»[29]։ Այսկերպ սակայն մենք, կարծեք, արդարացնում ենք փաստաթղթի գործառության հարցում թույլ տրված ենթակայական բնույթի սխալները, քանի որ, անկախ պատասխանատուների կատարած կազմակերպական և բացատրական աշխատանքից, սահմանադրությունը «ընդհանուր ընդունելություն չէր գտնելու»։

Իհարկե, սահմանադրությունը չէր ընդունվել հանրաքվեով. դա, այնուամենայնիվ, կատարել էր ներկայացուցչական մարմինը՝ Ազգային ընդհանուր ժողովը։ Սակայն «սահմանադրական տրամադրություն» ասվածը մեզ համար ոչ այնքան բուն փաստաթղթի հանդեպ հայ համայնքի վերաբերմունքն էր (թեպետ, իրոք, ցանկալի էր ավելի շահագրգիռ և գործունյա վերաբերմունք, քան դրսևորեցին հայկական կազմակերպությունները, մանավանդ գավառներում), որքան հայ ժողովրդին ներհատուկ ձգտումը օրինականության հաստատման (ինչի ապացույցը հիշատակվեց սույն հոդվածի սկզբում)։

Այլ բան է, թե հանրության առաջնորդները, մտավորականությունը, քաղաքական և մշակութային վերնախավը ինչպես են կարողանում գործադրել այդ ձգտումը կամ, փիլիսոփայության լեզվով՝ ինչպես են նպաստում հայերիս՝ «ինքն իր մեջ» սահմանադրական ազգիս իրապես շիտակ ինքնության դրսևորմանը՝ դառնալու «ինքն իր համար» սահմանադրական ազգ։

«Սահմանադրական տրամադրություն» ոչ միայն կար, այլև հայոց սահմանադրականության այդ ոգին վարակիչ պիտի դառնար մյուս ազգերի, նաև թուրքերի համար։ Պետության ղեկավարները իրենց բացարձակ տիրապետությանը սպառնացող այդ վտանգը,

---

[26] **Գր. Զօհրապ**, Հայկական հարցը փաստաթղթերու լոյսին տակ // Երկերի ժողովածու չորս հատորով, հատ. Գ., Եր., Գրականութեան եւ արվեստի թանգարանի հրատ., 2002, էջ 528։

[27] **Մ. Մամուրյան**, Հայկական նամականի // Մ.Մամուրյան, Երկեր, Եր., «Հայաստան», 1966, էջ 528։ Առավել հանգամանալից Մ. Մամուրյանի հայացքների մասին տե՛ս **Վ. Միրզոյան**, Մատթեոս Մամուրյանը՝ հանրային կառավարման խնդիրների մասին // «Բանբեր ՀՊՏՀ», 2010, № 1, էջ 62–79։

[28] **Յ. Վարդանեան**, Սահմանադրական ճշմարտութիւններ ու անոնց պարտաւորութիւնները, Կ. Պոլիս, 1863, էջ 42։

[29] Անդ, էջ 55–56։

թերևս, ավելի շուտ զգացին, քան թուրք առաջադեմ մտավորականությունը, որ դեռ պիտի պայքարեր երկրում սահմանադրական միապետություն հաստատելու համար։ Հրաչյա Աճառյանի վկայությամբ՝ Կոստանդնուպոլսի քաղաքապետ Ալի փաշան, որ Բարձր դռան անունից 1863 թ. վավերացրել է «Ազգային սահմանադրությունը», լուրջ մտավախություն է ունեցել, թե դրա ոգին կարող է թափանցել թուրք հասարակության մեջ[30]։ Այդպես էլ եղավ. 1876 թ. թուրքական առաջին սահմանադրության «հայրը» թեպետ Միդհաթ փաշան է համարվում (հանձնախմբի ղեկավար էր նշանակվել էր սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից), բայց փաստացի աշխատանքը Գրիգոր Օտյանն է կատարել։ Միով բանիվ, պարզ է, որ հենց սկզբից թուրքերը պիտի փորձեին ամլացնել «Ազգային սահմանադրությունը»։

Սահմանադրության ներուժի թերօգտագործման այլ պատճառներ կային։ Օտար մշակութային միջավայրում որպես հանրային կառավարման փոքրիշատե ինքնուրույն գործոն հանդես գալու համար հայ համայնքը պետք է հնարավորինս միասնական լիներ, մի հատկություն, որի ցավալի բացակայությունը Խորենացու «Ողբից» սկսած անբաժանելի է հայոց խորհրդածություններից[31]։ Եվ այս անգամ էլ, Հակոբ Պողոսյանի ձևակերպմամբ, «հայկական համբաւաւոր անմիաբանութիւնը» իր վնասակար դերը խաղաց[32]։

Նկատենք, որ «համբավավոր» դեռ չի նշանակում անխուսափելի։ Հենց սահմանադրության ընդունումն իսկ սկզբնական շրջանում միավորող դեր կատարեց։ Չէ՞ որ դա վերկուսակցական, համազգային նպատակ էր հետապնդում։ Մինչ սահմանադրությունը և դրանից հետո վիճակն այլ էր։ Ահա թե ինչ հակապատկեր է ուրվագծել Մ. Մամուրյանը 1900 թվականին։ Այդ շրջանում կուսակցական «հակառակութեան ու երկպառակութեան որոմներն» էին սպառնում համայնքի կազմակերպական միասնականությանը։ Ավելին, «ժողովուրդն՝ կրաւորական դիրք մը պահելու վարժուած՝ ստէպ անտարբեր ականատես կ'մնար իր ղեկավարներուն կուսակցական շարժումներուն, և երբեմն այս կամ այն կողմը կուրօրէն հակելով անոնց ձեռքը իբրև գործիք կ'ծառայէր»։ Ահա այս պայմաններում «սահմանադրական կոչուած օրինագիրը ներմուծուելով հանրային գործերու մէջ աւելի օրինաւոր և արդարասէր ուղղութիւն մը տեսնելու յոյսեր ծնան, յոյսեր՝ որ ապագային մէջ կարելի եղածին չափ իրականանալու վիճակ մի պիտ ստանային»[33]։ Այդ «կարելին», ավաղ, բավական չեղավ խուսափելու արդեն սահմանադրության գործադրման ընթացքում առաջացած երկպառակությունից։

Իհարկե, թուրքահայության երկփեղկվածությունը մասամբ անխուսափելի արտացոլումն էր համապետական սոցիալ-տնտեսական իրողության, մասամբ էլ միտումնավոր էր թելադրվում. հատկապես XIX դարի քաղաքական անցքերը վկայությունն են, թե Թուրքիայի ղեկավարները որքան նենգորեն են պառակտել հայոց շարքերը։ Մամուրյանի վկայությամբ՝ «տերությունն հեռուեն կքաջալերե այս երկպառակ վիճակն, քաջ գիտենալով որ՝ իր

[30] «1863 թվին, երբ հայերը դրոշակներով զարդարված 20 շոգենավերով և նվագածությամբ շնորհակալություն էին հայտնում եպարքոս Ալի փաշային իր Բեբեքի պալատի առաջ՝ սահմանադրության հաստատման համար, եպարքոսը իր մի բարեկամին դառնալով ասաց. «Ես պոռոտախոս հույներից չեմ վախենում, այլ հայերից, որոնք լռիկ-մնջիկ գործում են և թուրք ժողովրդի հետ սերտ շփման մեջ են. վախենում եմ, որ սրանք մի օր տաճկաց միանալով հեղափոխություն անեն երկրի մեջ»։ Այսպես էր մտածում նաև եպարքոս Ֆուադ փաշան, որ իր վերջին կտակում շեշտել էր ուշադիր լինել հայոց վրա առանձնապես։ Իսկ մեծ եպարքոս Միդհաթ փաշան, որ գաղափարական մարդ էր և հասկանում էր, թե ժողովրդական շարժման և ազատական հոսանքի առաջն առնել անկարելի է, 1876 թ.-ի Օսմանյան սահմանադրությունը հորինված ժամանակ մտածում էր, թե երբ ազատությունը տիրի երկրում, ամենից ավելի հայերը պիտի շահեն, բայց թուրքերին էլ իրենց հետևից պիտի քաշեն, և սրանք միշտ իբրև բազմաթիվ և տիրող տարր կարողանան առաջնակարգ դեր ունենալ» (**Հր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 16–17)։ Հր. Աճառյանի հիշատակած Միդհաթ փաշան, որին մեծ վեզիր՝ վարչապետ էր կարգել Սուլթան Համիդ II-ը, իսկապես «գաղափարական մարդ» էր, սակայն բնավ էլ ո՛չ առաջադիմական կամ ազատական հայացքների տեր. որպես «Նոր օսմանների» պարագլուխ՝ նպատակ էր հետապնդում հենց սահմանադրության ճանապարհով ձուլել ազգային փոքրամասնություններին, բոլորին վերածել օսմանցիների՝ թուրք ազգի գերիշխանության պահպանմամբ։

[31] Տե՛ս **Մ. Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., «Հայաստան», 1990, էջ 235–239։

[32] **Յ. Պ. Պողոսեան**, նշվ. աշխ., էջ 513։

[33] «Արեւելեան մամուլ», թ.15, 1 օգոստոս 1990, էջ 580–581։

հպատակներուն մեջ միությունն վտանգավոր երևույթ մ'է»[34]: Այնուամենայնիվ, սահմանադրության գործադրման ընթացքում առաջ եկան, կրկնում ենք, անցանկալի բախումներ, գժտություն, փոխադարձ մեղադրանքներ:

Եթե այսօրվա դիրքերից առանձնացնենք ամենակարևորը («դաս քաղենք» մերոնց սխալներից), ապա պիտի նշենք, թերևս, անհատական և հանրային շահերի հաշտեցման, սեփական իսկ օրենքներին կամովին ենթարկվելու անկարողությունը, որը, ցավոք, դրսևորվել է ոչ միայն համայնքի շարքային անդամների, այլև ամենաբարձր մակարդակի պատասխանատուների վարքագծում:

Այսպես՝ տակավին մեկ տարի էլ չէր անցել Ազգային ժողովի աշխատանքի սկզբից, երբ Երուսաղեմի պատրիարքը, չենթարկվելով սահմանադրական այն պահանջին, ըստ որի ինքը պետք է ընտրվեր ազգային երեսփոխանների կազմից, այլ ոչ թե միայն վանքի միաբանությունից, համագումար է հրավիրում միմիայն հոգևորականների, այդկերպ բացահայտ պայքարելով Ազգային ժողովի դեմ, խառնակություն սերմանելով, ինչն էլ առիթ է դառնում Բարձր դռան համար՝ կասեցնելու սահմանադրության գործադրումը[35]:

Այս օրինակը, ցավոք, միակը չէ: Արմատական սխալ էր սահմանադրության կարգավորման տիրույթից կաթոլիկ հայերին դուրս թողնելը. իսկ չէ՞ որ դա հենց օսմանյան կառավարիչների նպատակներից էր. պետակա-

նորեն հայությունը տարանջատված էր «հայ ազգի» և «կաթոլիկ ազգի»[36]:

Թեպետ սահմանադրությունը կողմ էր ապակենտրոնացման սկզբունքին, և գավառական վարչություններին ինքնուրույնություն էր տրված տեղական կառույցների, խորհուրդների երեսփոխանների կազմի, տեղական տուրքի գանձման հարցում, սակայն, միևնույն ժամանակ, գավառական հայությունը վատ էր ներկայացված օրենսդիր մարմնում՝ Ազգային ժողովում[37]:

Ազգային ժողովում և գործադիր մարմինների միջև, կենտրոնական և տեղական կառույցների միջև, հենց բուն այդ մարմինների ներսում անձնական հողի վրա ծագած բազում մանր-մունր հարցեր ստվերում էին համազգային կարևորության խնդիրների ըմբռնումը, ամենից առաջ՝ օտար պետական շրջանակներում հայության միասնականության ապահովումը, հանրային կյանքի ներդաշնակ կարգավորման հրամայականը:

Ամփոփ գնահատական

---

[34] **Մ. Մամուրյան**, Անգլիական նամականի, 1966, էջ 244:

[35] Տե՛ս **Ա. Սարուխան**, նշվ. աշխ., էջ 23–24: «Երուսաղէմի վանքին վիճակուել է միշտ՝ այս կամ այն ձևով կռուածաղկի դեր կատարել Կ. Պոլսի ազգային իշխանութեան, նրա զանազան ճիւղերի և հայ հասարակութեան մէջ» (անդ, էջ 31):

[36] Թուրք տարեգիր Ահմեդ Լութֆիի գրառումներից ակնհայտ է, որ, մասնավորապես, 1834–1835 թվականների իրավական բարեփոխումները բացահայտ ուղղված էին կրոնական հիմքով հայ բնակչության պառակտման պաշտոնական վավերացմանը: Ահավասիկ թուրքական նենգամտության մի ցայտուն ապացույց. «Ռայաների նկատմամբ սուլթանական բարձր իշխանության տածած սիրո և գթության պահանջին համապատասխան որոշվեց, որ հայերի կողմից կաթոլիկներին և կաթոլիկների կողմից հայերի վերադարձը չպետք է թույլ տալ, այդ մասին հատուկ կանոն պիտի հաստատվի, որի նպատակը կլինի պահպանել օսմանյան պետության կարգն ու կանոնը» («Թուրքական աղբյուրներ», հ. Դ, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1972, էջ 43):

[37] Ըստ սահմանադրական նորմի՝ Ազգային ժողովի անդամներից 100-ը ընտրվում էին մայրաքաղաքից, միայն 40-ը՝ մնացած տարածքից: Մինչդեռ 1860 թ. տվյալներով Թուրքիայում հայությունը 2 միլիոնից ավելի էր, Կոստանդնուպոլսում՝ ընդամենը 70 հազար: «Մինչև Խրիմեանի պատրիարքութեան բարձրանալը,– վկայում է Առաքել Սարուխանը,– գավառներին առհասարակ շատ քիչ ուշադրութիւն էր նուիրվում Ազգային Կենտրոնական Վարչութեան կողմից» (**Ա. Սարուխան**, նշվ. աշխ., էջ 33):

Հետահայաց դիտարկմամբ՝ Ազգային սահմանադրությունը, անշուշտ, դրական դեր է խաղացել թուրքահայոց կյանքում: Հայության առաջադիմական տարրերի համառ և հետևողական պայքարի շնորհիվ Օսմանյան կայսրության հպատակ ազգերից մեկին հաջողվեց Կառավարության առջև որոշակի իրավական պահանջներ դնել, մեծապետական ապօրինությունների առջև իրավական սահմաններ քաշել, հանդես գալ, ժամանակակից լեզվով ասած՝ **որպես հանրային կառավարման հավաքական սուբյեկտ:** Այդպես էլ ամրագրված է եղել իրավագիտակցության մեջ, ամփոփվել տեսական մեկնաբանություններում. «Ազգային Սահմանադրութիւնն որչափ ազգային, նոյնչափ և օսմանեան պետական օրէնք է»[38], «Սահմանադրութիւնը, ինչպէս որ է, տէրութիւն և ազգ ընդունած են.... Սահմանադրութեան գրոյն պարտաւոր ենք հետեւիլ»[39]: Իրավակիրառական առումով մեծ չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Ազգային սահմանադրությամբ թուրքահայությունը պետականություն հիշեցնող որոշակի հատկանիշ էր ձեռք բերում, ինչպես, դիցուք՝ Մեծ Բրիտանիայի կազմում Ուելսը կամ Շոտլանդիան: Իսկ իրադարձությունների հետագա ընթացքը, հասկանալի է, պայմանավորված էր բազում գործոններով, և սխալ կլիներ իրական կյանքի վրա ազդեցության առումով տվյալ փաստաթղթի նշանակության ինչպես գերագնահատումը, այնպես էլ թերագնահատումը:

Սահմանադրությունը միգուցե ավելի արժեքավոր է տեսական ըմբռնումների առումով: Չէ՞ որ դրա ընդունումը և հանրային կյանքում գործադրման ընթացքում առաջացած հիմնախնդիրները խթանեցին հայ մտավորականությանը՝ խորանալու համակեցության առավել օրինական ձևերի որոնման մեջ: Ժամանակաշրջանի հայ տեսական մտքից ընդամենը մի քանի մեջբերմամբ կհամոզվենք, թե որքան արդիական լուծումներ են տրվել, որքան համահունչ են դրանք այսօրվա կառավարչական մտքին, և, ուրեմն, որքան անհրաժեշտ է դրանց իմացությունը պետականակերտման, հանրային կառավարման ներկայիս խնդիրների ըմբռնման, մասնավորապես՝ համամարդկային ընդօրինակելի փորձը սեփական ազգամշակութային հենքով գործադրելու համար:

«Ինչ է սահմանադրությունը» ելակետային հարցի պատասխանը Գրիգոր Զոհրապը սեղմ շարադրել է 1908 թ. մի բանախոսության մեջ՝ նվիրված օսմանյան սահմանադրության վերաքննության հարցերին: Եվրոպական լեզուներում «**constitution**»-ը կազմություն է նշանակում և, իսկապես, բնութագրում է պետական իշխանության տեսակը, ձևավորման կարգը, համապետական հաստատությունները, վարչատարածքային կառուցվածքը, քաղաքացիների մասնակցությունը իշխանական մարմինների կազմավորմանը: Այս առումով հայերեն անվանումը դուրս է ընդհանուր շարքից: Բայց եթե շեշտը դնենք ոչ թե իրավական ձևակերպումների ամբողջության, այլ փաստաթղթից օգտվելու վրա, ապա «սահմանադրությունը» իմաստային առավելություն ունի: «Գիտական տեսակէտով ուղիղ չէ, բայց սա առաւելութիւնը ունի որ դիւրըմբռնելի եւ մեկեն ձեւով մը կը յայտնէ ժողովուրդին գլխաւոր ակնկալութիւնը....»: Որպես հանրային հաստատություն՝ պետությունը քաղաքականապես հակադիր ուժերի հաշտեցման մարմին է: Սակայն, որպես հրապարակային, բացարձակ իշխանություն, հզորանալով՝ պետությունն այլափոխվում է, կորցնում հաշտեցման գործառույթը. չհանդիպելով հակազդեցության, իշխանությունը սկսում է այլասերվել, դառնալ ամենակուլ ուժ: Այս երևույթը՝ չափի խախտումը, Զոհրապն անվանում է «զեղծանելու օրէնք», որին, իր համոզմամբ, «ամենէն աւելի պետութիւն կոչուած մարմինները սիրայօժար ենթակայ եղած են ամեն ատէն ու ամենուրեք»: Ուստի հարկ է սահմանափակել պետության ու պաշտոնյաների նկրտումները: Դա էլ արվում է իրավականորեն սահման դնելով՝ **սահմանադրությամբ**: Սա սահմանադրության հանրային դերակատարման մի կողմն է, «բացասական աշխատութիւն մըն է»: Մյուս՝ «շինիչ ու օգտակար» կողմն այն է, որ Սահմանա-

[38] **Ա. Սարուխան**, նշվ. աշխ., էջ Բ:
[39] **Գր. Օտեան**, նշվ. աշխ., էջ 11, 16:

դրությունն ուղղորդում է պետությանը դեպի արարիչ գործունեություն. պետությունը «....վիճակին բարելաւութեանը ծառայէ, ներդաշնակութիւն մը յառաջ բերէ»[40]:

Շատ տպավորիչ է բացատրում **Հ. Վարդանյանը** պետական կառավարման ձևերի տարբերությունը և սահմանադրության անհրաժեշտությունը. «Սահմանադրական միապետութիւնը ունի բուն միապետութեան բոլոր երևոյթը, բայց իր կառավարութիւնը ունի ռամկապետութեան բոլոր պահանջմունքը: Հոն թագաւորը կը թագաւորէ բայց չ'կառավարեր. հոն ժողովուրդը կը կառավարէ բայց չի թագաւորէր.... Բայց որպէս զի թագաւորը թագաւորէ բայց չ'կառաւարէ, և ժողովուրդը կառավարէ բայց չ'թագաւորէ, հարկ կ'ըլլայ որ երկու կողման իրաւունքները և պարտաւորութիւնները որոշուին և հաստատուին, որն որ կ'ըլլայ Սահմանադրութեամբ»[41]:

Հիմնախնդրի հանգամանալից վերլուծություն է հանդիպում պատմաբան, թարգմանիչ, հնչակյան կուսակցության հիմնադիրներից մեկի՝ **Խան-Ազատ Ռուբենի** (Նշան Կարապետյան, 1862–1929 թթ.) «Ի՞նչ է սահմանադրութիւնը» գրքույկում: Քննարկելով Ռուսաստանում և Պարսկաստանում սահմանադրական շարժման ընթացքը, այդ հողի վրա կառավարիչների և ժողովրդի միջև հարաճուն լարվածությունը, դրա պարպման հնարավոր ելքերը՝ հեղինակը «սահմանադրությունը երկրի հիմնական օրէնքն է» իրավական սահմանումը փաստորեն տեղափոխում է սոցիոլոգիական դիտարկման դաշտ. «Բայց ի՞նչ են նշանակում հիմնական օրէնքներ, ինչո՞վ են նրանք պայմանաւորվում, ումնի՞ց են նրանք թելադրվում, ինչո՞ւ նրանք զանազան երկրներում տարբեր են»[42]: Պատասխանը հետևյալն է. «Մի երկրի սահմանադրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ո՛չ այդ երկրում գոյութիւն ունեցող իրական ոյժերի միմեանց հետ ունեցած յարաբերութիւնների արտայայտութիւնը: Նրա համար էլ սահմանադրութիւնը կոչվում է հիմնական օրէնքներ, որ նա հիմնված ու կառուցված է անպատճառ կեանքի մէջ գոյութիւն ունեցող իրական ոյժերի վրա»[43]: Այստեղից էլ բխում է կարևոր եզրակացություն իրական և իրավական (գրառված) սահմանադրությունների համապատասխանության կարևորության մասին. «Մի որևէ երկրի իրաւական սահմանադրութիւնը չէ կարելի պատուաստել մի այլ երկրի վրա, եթէ այս վերջինի իրական սահմանադրութիւնը, նրա մէջ զարգացած իրական ոյժերն ու սրանց յարաբերութիւնները բոլորովին տարբեր են ու չեն համապատասխանում առաջինի իրական սահմանադրութեանը»[44]:

Կարծեք քաղաքագիտության ժամանակակից դասագրքում ենք կարդում իշխանության թևերի հակակշռման ու զսպումների, հատկապես բյուջեի միջոցով իշխանական մարմինների վրա ժողովրդի վերահսկողությունն ապահովելու կառուցակարգերի վերաբերյալ **Ատոմի** եզրակացությունը. «Սահմանադրական կեանքի մէջ, սահմանադրական պետութիւններու մէջ ժողովուրդի կողմէ միապետական, տիրող ուժի եւ իշխանութեան դէմ իր ներկայացուցիչներուն՝ խորհրդարանի միջոցով գործադրուած ամէնէն ուժեղ հակակշիռը պիւտճէն է: Սահմանադրականութեան էական պայմանն է որ առանց պիւտճէն պարլամէնտէն քուէարկուելու, այսինքն առանց տուրքերը ժողովրդի ներկայացուցիչներուն կողմէ որոշուելու, առանց գանձումը արտօնուելու՝ ինչպէս եւ առանց ըլլալիք ծախքերը որոշուելու եւ ելքը արտօնուելու, իշխանութիւնը իրաւունք չունենար ո՛եւ է գանձում եւ ծախք ընելու»[45]:

Հանրային արդյունավետ կառավարման կարևորագույն նախադրյալն է նշում **Գր. Օտյանը**, հիշատակելով հանրության և կառավարչական հաստատությունների միջև փոխադարձ վստահության անհրաժեշտությունը. «Պէտք է գիտնայ Հասարակութիւնը թէ

---

[40] **Գր. Զոհրապ**, Օսմ. սահմանադրութեան վերաքննութիւնը // Երկերի ժողովածու չորս հատորով, յաւելեալ հատ. Ե, Եր., Գրականութեան եւ արվեստի թանգարանի հրատ., 2004, էջ 56, 57, 58:
[41] **Յ. Վարդանեան**, նշվ. աշխ., էջ 7:
[42] **Ռ. Խան-Ազատ**, Ի՞նչ է սահմանադրութիւն, Թիֆլիս, տպարան «Հերմէս», 1907, էջ 9–10:
[43] Անդ, էջ 13:
[44] Անդ, էջ 31:
[45] **Ատոմ**, նշվ. աշխ., էջ 85:

առանց վստահութեան գործ տեսնելն անկարելի է։ Երբ վարչութիւնը աղէկ ալ ընէ՝ գէ՛շ կ'երեւայ, երբ դիպուածը իբրև հնարագիտութիւն մեկնուի, ո՛ր և է Վարչութիւն կը պարտաւորի գործելու և իր որ և է գործքը, թէեւ Ազգին համար է՛ն օգտակարն ըլլայ, թիւր հասկցուելով, անկատար կը մնայ»[46]։

Որպես վերջաբան

2010 թվականին լրացավ ոչ միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության 15-ամյակը, այլև հայոց «Ազգային սահմանադրության» 150 տարին։ Առաջինը (ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին, մասնակի փոփոխվել՝ 2007-ի նոյեմբերի 27-ին) մեր Երրորդ հանրապետության հիմնական օրենքն է, գործող հիմնարար փաստաթուղթ։ Երկրորդը, ինքնին հասկանալի է, այսօր ունի սոսկ պատմական արժեք։ Այդուհանդերձ, երկուսի ոգին էլ նույնն է՝ հայ ժողովրդի՝ սահմանադրական ազգ լինելու, համակեցությունը օրինավոր հիմքերին խարսխելու ձգտման ապացույցը։ Ահա այս ներքին կապի լույսով է հարկավոր ան-դրադառնալ Ազգային սահմանադրությանը՝ որպես հայ մարդկանց ինքնակազմակերպվելու կարողության յուրատեսակ վավերագրի, հայ իրավական և կառավարաբանական մտքի կարևոր հուշարձանի։

Հայոց երևելիներից մեկը՝ **Ղևոնդ Ալիշանը**, քննարկելով նախնիների վաստակի գնահատման ու ժամանակակիցներիս կողմից դրա դերի ընկալման հարցը, հրաշալի մի ձևակերպում է տվել. նախնիների վաստակը պետք է իմանալ ու գնահատել, «անոնց պարծանքն ու փառքը մեկ լույս մըն է մեր ճամբուն վրա, բայց մենք պետք է աչվնիս բանանք ու ոտվնիս շարժենք»[47]։

Ահավասիկ «Ազգային սահմանադրությունը» հայ տեսական մտքի վառած ջահերից մեկն է, որի լույսը նույնպես օգնում է մեզ ճանապարհը տեսնելու, բայց այսօրվա հայոց պետականությունը ինքներս պիտի կերտենք՝ հենվելով նախնյաց մտքի և փորձի քննական վերլուծության վրա։

---

[46] **Գր. Օտեան**, նշվ. աշխ., էջ 25։

[47] **Ղ. Ալիշան**, Ազգին պակսութեանց կամ կատարելութեանց վրա // Ղ.Ալիշան, Երկեր, Եր., «Սով. գրող», 1981, էջ 173։